

# ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

վայրը \_\_\_\_\_

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները  
այսուհետ՝ «Ապահովագրող», ի դեմս՝ \_\_\_\_\_, որը գործում է \_\_\_\_\_  
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և \_\_\_\_\_,  
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները  
այսուհետ՝ «Ապահովագրվող», ի դեմս՝ \_\_\_\_\_, որը գործում է \_\_\_\_\_  
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Ապահովագրողն իր վրա է վերցնում «Ապահովագրվողի» բժշկական և այլ ծառայություն մատուցելու հետ կապված ծախսերը:

1.2. Ապահովագրողի իրականացրած ծառայությունների ծավալը որոշվում է սույն պայմանագրին կից ապահովագրական ծրագրով, որը պայմանագրի անբաժանելի մասն է: Սի քանի ծրագրերի առկայության դեպքում պայմանագրին կցվում են բոլոր ծրագրերը:

1.3. Պայմանագիրը կնքելուց հետո՝ \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) օրվա ընթացքում, Ապահովագրողը «Ապահովագրվողին» տալիս է սահմանված ձևի բժշկական պոլիս, որում նշվում է պոլիսի գործողության ժամկետը՝ դրան կցելով ապահովագրական ծրագիրը և ծրագրում նշված ծառայությունները մատուցող բժշկական հաստատությունների ցանկը:

1.4. Ապահովագրվածների ցուցակները՝ նրանցից յուրաքանչյուրի ազգանվան, անվան, հայրանվան, ծննդյան թվի, սեռի, աշխատանքի վայրի, բնակության վայրի նշմամբ, Ապահովագրվողը հանձնում է Ապահովագրողին ոչ ուշ, քան պայմանագիրը ստորագրելու պահից \_\_\_\_\_ օրվա ընթացքում:  
բվերով և բառերով

1.5. Յուրաքանչյուր կատարվող փոփոխություններն Ապահովագրվողը համաձայնեցնում է Ապահովագրողի հետ պայմանագրում նշված ժամկետներում՝ պոլիսների հետագա վերաձևակերպմամբ:

## 2. Ապահովագրական վճարների չափը, ժամկետները և կարգը

2.1. Յուրաքանչյուր Ապահովագրվածի համար տարեկան ապահովագրական վճարի չափը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) դրամ:

2.2. Ապահովագրողը Ապահովագրական վճարները կատարում է յուրաքանչյուր փուլը սկսելուց \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) օր առաջ:  
վճարները կատարվում են \_\_\_\_\_:

հաշվարկների իրականացման ձևը

2.3. Պայմանագիրը գործողության մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

2.4. Ապահովագրողը կարող է վերադարձնել ապահովագրական վճարների մի մասը: Դրա պայմանները և չափը որոշվում են կողմերի համաձայնությամբ:

## 3. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրը կնքված է հետևյալ ժամկետով՝ « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.- ից մինչև « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Ապահովագրվողը կետանցի յուրաքանչյուր օրվա համար Ապահովագրողին վճարում է տուժավճար՝ ապահովագրական վճարների ժամանակին չմուծված գումարի \_\_\_\_\_ տոկոսի չափով: Տուժավճարը վճարումն Ապահովագրվողին չի ազատում ապահովագրական վճարը մուծելուց:

4.2. Կետանցի \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) օրը լրանալուց հետո Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի կատարել պայմանագրի գործողությունը՝ այդ մասին ծանուցելով Ապահովագրվողին:

4.3. Պարտքը և տուժավճարը վճարելուց հետո պայմանագիրը կարող է վերսկսվել:

4.4. Պայմանագրի գործողության կասեցման ընթացքում բժշկական կազմակերպությունն ապահովագրվածներին մատուցում է պոլիսով նախատեսված ծառայությունները՝ վճարումը կատարելով նրանց հաշվին:

4.5. Պոլիսով նախատեսված ծառայություններն Ապահովագրվողին մատուցելուց հրաժարվելու, ինչպես նաև ոչ լրիվ կամ անպատշաճ մատուցելու դեպքում Ապահովագրողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ պատժամիջոցները՝

4.5.1. ապահովագրական վճարի \_\_\_\_\_ տոկոսի վերադարձ Ապահովագրվողին.

4.5.2. տուգանքի վճարում \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) դրամի չափով:

4.6. Կամավոր անհատական ապահովագրության ժամանակ Ապահովագրվածի մահվան դեպքում նրա իրավահաջորդ է հանդիսանում \_\_\_\_\_:

ազգանունը, անունը, անձնագրի տվյալները

## 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄՄԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

**6. Վեճերի լուծման կարգը**

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնությամբ ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

**7. Այլ պայմաններ**

Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**8. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները**

*Ապահովագրող*  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
ստորագրություն

*Ապահովագրվող*  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
ստորագրություն